

քուած էին անուանը շնորհաւորութեան համար, յանկարծ սաւետնիկ Միկիփորով կու գայ եւ Արքեպ.ին կ'ըսէ, թէ կայսեր հրամանն է՝ կոպեւնատոր երթանք: Արքեպ.ն յանկարծ կը տկարանայ եւ քանի մ'օր անկողին կը մնայ: Յունուար 23ին կայսեր կողմանէ յատուկ «փելթէ», կու գայ գրով մը, թէ «Անտոն Արքեպիսկոպոս Պուրատեան, եթէ իցէ ի քաղաքին Ղարասու, մնասցէ անդ, եւ եթէ ելեալ իցէ անտի վերադարձցի ի տեղի իւր, քանզի վերահասութիւն նորա՝ միայն յինէն կախեալ է», կայսեր հրամանաւ՝ կնեազ մինիստր կալիցին Արքեպ.էն կը պահանջէ «օրէսնէնի», որպիսութեան 30 Յունուար 1819, Թ. 155, թղթով: Կայսրը կը պահանջէր հետեւեալ հարցմանց պատասխանը, որուն պատասխանած է իսկոյն Անտոն Արքեպիսկոպոս, քիչ վարն յառաջ բերուած նամակին համեմատ.

1. Հարց. Ինչո՞ւ թողուցիք հռոմէական Եկեղեցւոյ դաւանութիւնը:

Պտ. Բնաւ չթողուցի սրտիւ:

2. Հ. Ինչո՞ւ Լքիք յանձնուած վիճակը:

Պ. Պատրիարքին պահանջման չուզեցի հետեւիլ եւ Ռուսաց հպատակութիւնը թողուլ:

3. Հ. Ո՞ւր եւ ի՞նչպէս միացաք դարձեալ Հռոմայ Եկեղեցւոյ հետ:

Պ. Պոլիս Առաքելական Կուիրակին եւ Լիբանան Կաթողիկէ Հայոց Կաթողիկոսին քով, որոնց վկայականները Մետրապոլտին տուած եմ: